ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13.11.2019 11:51

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն է տարածել ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործի շրջանակներում, ենթադրյալ հանցագործություն կատարած երկու փաստաբանի բերման ենթարկելու և ձերբակալելու վերաբերյալ:

Նախ՝ պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Երկրորդ, «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խնդիրներից է նաև իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում պաշտպանելը:

Փաստաբանների պալատը, ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այժմ էլ միջոցներ է ձեռնարկելու ձերբակալված փաստաբանների իրավաբանական օգնության հարցը ճշտելու և ըստ անհրաժեշտության այդ օգնությունը կազմակերպելու ուղղությամբ:

Երրորդ, Փաստաբանների պալատը մշտապես պայքարել և պայքարելու է կոռուպցիոն երևույթների դեմ, անկախ այն հանգամանքից դրանում ներգրավված են փաստաբաններ, թե՝ ոչ: Կոռուպցիոն երևույթներն ամենաշատը վնասում են փաստաբանի մասնագիտական հեղինակությանը, քանի որ զրոյացնում են փաստաբանի մասնագիտական ջանքերը և հավատը փաստաբանության նկատմամբ:

Պատահական չէ, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, համարում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում և փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման հիմք:

Արտոնագրի գործողությունը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ փաստաբանը դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Դեռևս ՀՀ փաստաբանական դպրոցում ունկնդիրների ուսուցման շրջանակներում, հատուկ ուշադրություն է դարձվում կոռուպցիոն երևույթների վերաբերյալ իրազեկումներին: Փաստաբանի արտոնագրեր տալու միջոցառման ժամանակ առիթը բաց չի թողնվում նոր փաստաբաններին հիշեցնելու կոռուպցիայից հեռու մնալու պատվիրանի մասին:

Ամփոփելով վերոհիշյալը, Փաստաբանների պալատը կրկին անգամ կոչ է անում փաստաբաններին չներգրավվել կոռուպցիոն հարաբերություններում և հավատարիմ մնալ փաստաբանի մասնագիտական կոչմանը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի

Նախագահ՝ Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })